

Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի պետության և իրավունքի
ընտանիքի ու պարմության ամբիոնի վարիչ,
ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավ. գիյ. դոկտոր, պրոֆեսոր

ԻՐԱՎՈՒՆԻ ՄԿՉՐՈՒՆԵՐԵՐԻ ԱՐՏԱՏԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՆԶԻԱՆՏԵՐԸ ԵՎ ՆԵՐՏԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ

*Սույն հոդվածի սկիզբը նախորդ
համարում*

2.2. Սահմանադրական կարգի սկզբունքների ու սահմանադրական այլ նորմերի կոլիզիաները և դրանց լուծումը

(ա) Հակասահմանադրական սահմանադրական նորմերը: Սահմանադրական իրավունքի տեսության մեջ տարածում ունի այն մոտեցումը, որ սահմանադրական նորմերն ունեն միևնույն արժեքը և հավասար իրավաբանական ուժ: Ավելին՝ Սահմանադրությունը ներկայացնելով որպես ինքնաբավ փաստաթուղթ՝ փորձ է արվում բացառել սահմանադրական նորմերի ներքին հակասությունների գոյության՝ անգամ տեսական հնարավորությունը: Օրինակ՝ որոշ հեղինակներ նշում են. «Այս մոտեցումը (իմունիտետի և օրենքի առջև հավասարության սկզբունքի միջև հակասության առկայության մոտեցումը՝ հեղ.) ունի թույլ օղակ: Իրավական իմունիտետները՝ որպես օրենքի և դատարանի առջև հավասարության սկզբունքի խախտում բնութագրելը տրամաբանորեն պետք է հանգեցնի այն եզրակացության, որ Սահմանադրության նորմը խախտվում է նույն Սահմանադրության մեկ այլ նորմով, այսինքն՝ փաստացի բարձրացվում է սահմանադրական նորմի սահմանադրականության հարց: Ընդ որում՝ երկու նորմերը, որոնք, ըստ այդ մոտեցման կողմնակիցների, հակասում են միմյանց, ունեն միևնույն իրավաբանական ուժը»¹: Ինչպես նկատում ենք, հեղինակը փորձում է հեքքել իմունիտետի և օրենքի առջև հավասարության սկզբունքի միջև

հակասությունն այն հիմնավորմամբ, որ երկու դրույթներն էլ ամրագրված են Սահմանադրությունում, իսկ սահմանադրական նորմերն ունեն միևնույն իրավաբանական ուժը: Այլ կերպ ասած՝ սահմանադրական նորմերի միջև հնարավոր հակասությունը փորձ է արվում բացառել նորմերի հավասար իրավաբանական ուժ ունենալու հանգամանքով: Նման մոտեցումը վիճելի է: Նախ՝ վաղուց համընդհանուր ճանաչում ունի այն, որ հակասություն կարող է առաջանալ ոչ միայն տարբեր, այլև հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմերի միջև: Երկրորդ՝ արդեն նշվեց, որ իրավունքի սկզբունքները, իրենց բովանդակությամբ պայմանավորված, ավելի բարձր իրավաբանական ուժ ունեն, քան իրավական այլ նորմերը: Ասվածը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ իրավունքի սկզբունքը և իրավական այլ նորմերն ամրագրված են միևնույն նորմատիվ ակտում: Օրինակ՝ Սահմանադրության մեջ արտացոլված սահմանադրական կարգի սկզբունքները սահմանադրական այլ նորմերի համեմատությամբ ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ:

Օ. Ռումյանցևն առաջիններից էր, որը սահմանադրական կարգի հիմունքների վերաբերյալ արտահայտել է սույն հետազոտման տեսանկյունից արժեքավոր նշանակություն ունեցող դատողություններ: Նա նշում է. «Սահմանադրական կարգի հիմունքները գերակայություն ունեն Սահմանադրության այլ դրույթների նկատմամբ: Սահմանադրական կարգի հիմունքները օրինաչափորեն հանդես

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2019 3 - 4 (237-238)

ՊԱՏԱԿԱՆ
Իշխանություն



են գալիս որպես «Սահմանադրության Սահմանադրություն»: Սահմանադրական կարգի հիմունքները կարելի է ներկայացնել որպես նորմ, որով պետք է չափել Հիմնական օրենքի տեքստը»²: Սահմանադրական կարգի հիմունքները «Սահմանադրություն են Սահմանադրության մեջ» ձևակերպումը դարձել է դասական³, սակայն դրա բովանդակային արժեքն այն է, որ սահմանադրական կարգի հիմունքները Սահմանադրության այլ հոդվածների սահմանադրականությունը որոշելու հիմնական չափանիշն են, դրանք սահմանադրական սկզբունքներ են, ուստի սահմանադրական այլ նորմերի նկատմամբ ունեն բարձր իրավաբանական ուժ: Առանձին պետություններում սահմանադրական այլ նորմերի նկատմամբ սահմանադրական կարգի սկզբունքների գերակայությունն անմիջականորեն ամրագրված է նույնիսկ սահմանադրության տեքստում, օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասը:

Հայ սահմանադրագետները ՌԴ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասը գնահատում են որպես ինքնատիպ իրավական կարգավորում, որը համաշխարհային սահմանադրական շինարարության պրակտիկայում նմանատիպը չունի⁴: Ա. Պետրովը ՌԴ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի կապակցությամբ նշում է. «Նորմատիվ ակտի կառուցվածքի մի մասին՝ մյուս բոլոր մասերի համեմատությամբ հիերարխիկ առաջնությամբ օժտելը յուրահատուկ իրավատեխնիկական հնարք է, որը զարգացած պետությունների իրավաստեղծ պրակտիկայում չի հանդիպում (հեղինակին, համեմայն դեպք, այդպիսի օրինակներ հայտնի չեն)»⁵:

ՌԴ-ում սահմանադրական այլ նորմերի նկատմամբ սահմանադրական կարգի սկզբունքների գերակայության պահանջը թեև ամրագրված է անմիջապես Սահմանադրության տեքստում, սակայն դրանից չպետք է բխեցնել, որ եթե

մեկ այլ պետության Սահմանադրության մեջ սահմանադրական կարգի սկզբունքների գերակայության մասին հոդված նախատեսված չէ, ուստի սահմանադրական կարգի սկզբունքները և սահմանադրական մյուս նորմերը ունեն միևնույն իրավաբանական ուժը: Կրկին նշենք, որ սահմանադրական այլ նորմերի համեմատությամբ սահմանադրական կարգի սկզբունքների (որպես իրավունքի ընդհանուր սկզբունքների) բարձր իրավաբանական ուժը բխում է սկզբունքների բովանդակությունից, նրանց կողմից պաշտպանվող սոցիալական արժեքների ուժից:

Սահմանադրության նորմերի ստորադասության (հիերարխիայի) մասին նշում են նաև հայտնի սահմանադրագետներ Վ. Չիրկինը և Ս. Ավագյանը: Նրանց կարծիքով ՌԴ Սահմանադրության նորմերի ներքին հիերարխիան դրսևորվում է հետևյալ կերպ. 1) որոշ նորմեր առավել կարևոր են և կանխորոշում են Սահմանադրության այլ նորմերի բովանդակությունը: Դրանք սահմանադրական կարգի հիմունքներն են: Սահմանադրության այլ նորմերը, Սահմանադրության մյուս գլուխներում կատարված փոփոխությունները չպետք է հակասեն սահմանադրական կարգի հիմունքներին (նորմերի նյութական հիերարխիա): 2) Իրենց կարևորության ուժով Սահմանադրության որոշ դրույթները, ի տարբերություն այլ նորմերի, կարող են փոփոխվել առավել բարդեցված կարգով (նորմերի ֆորմալ հիերարխիա): Առավել բարձր կարգի են Սահմանադրության անփոփոխ նորմերը (օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 9-րդ գլուխների դրույթները), այնուհետև՝ առավել բարդ կարգով փոփոխվող նորմերը, իսկ վերջում՝ ընդհանուր կարգով փոփոխվող սահմանադրական նորմերը⁶:

Այս կապակցությամբ սահմանադրագետ Գ. Հովհաննիսյանը (Գերմանիա) նույնպես նշում է, որ իրականում Սահմանադրության նորմերը միևնույն իրավաբանական ուժը չունեն: Ասվածը հիմ-



նավորելու համար հեղինակը մեջբերում է ՀՀ 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 114-րդ հոդվածը, որի համաձայն՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն (այսպես կոչված «հավերժության դրույթ»): Նա նշում է. «Անփոփոխելի սահմանադրական նորմերն ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ, քան Սահմանադրության մյուս դրույթները (հակառակ պարագայում ո՞րն է անփոփոխելիության իմաստը): Սահմանադրական փոփոխությունների նախագծի մասին խոսելիս առաջնային հարցն այն է, թե արդյո՞ք սահմանադիրը Սահմանադրությունը փոփոխելիս որևէ բանով կաշկանդված է, թե կարող է ազատորեն փոխել ցանկացած դրույթ: Սահմանադրի նյութաիրավական սահմանափակումը բխում է 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 114-րդ հոդվածից, որը գերակայում է սահմանադրական մյուս նորմերին: ՀՀ Սահմանադրության 114-րդ հոդվածը նշանակում է, որ սահմանադիրը Սահմանադրությունը փոփոխելիս կաշկանդված է ՀՀ Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներում ամրագրված սկզբունքներով: Դա իր հերթին նշանակում է, որ նախ՝ սահմանադիրը Սահմանադրությունում կարող է փոխել ամեն ինչ, բացի այդ հոդվածներից: Երկրորդ՝ սահմանադրի կողմից նախատեսված ցանկացած փոփոխություն պետք է համապատասխանի ՀՀ Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներում ամրագրված սահմանադրական սկզբունքներին: «Սովորական» և «գերակա» (= Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներ) սահմանադրական նորմերի միջև բախման դեպքում ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմերը կլինեն հակասահմանադրական սահմանադրական նորմեր (այսպես կոչված՝ «հակասահմանադրական սահմանադրական իրավունք»): Հետևաբար, սահմանադրական փոփոխությունների նախագծի ցանկացած դրույթ, որը հակա-

ում է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության, ինչպես նաև ժողովրդաիշխանության սկզբունքներին, հակասահմանադրական է, հետևաբար՝ առչկինչ»⁷:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել:

Առաջին՝ Սահմանադրության նորմերի միջև հակասության հնարավորությունը չի կարելի բացառել զուտ այն փաստով, որ դրանք ամրագրված են Սահմանադրության տեքստում: Ինչքան էլ որ Սահմանադրությունը ներկայացվում է որպես ինքնաբավ փաստաթուղթ, միևնույնն է՝ այն մարդու արարման արդյունք է, ուստի չի կարելի «a priori» պնդել, որ այն զերծ է սխալներից, այդ թվում՝ ներքին հակասություններից:

Սահմանադրության ներհամակարգային կոլիզիաները լուծելիս պետք է ղեկավարվել «lex superior» կոլիզիոն կանոնով և նախապատվություն տալ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող սահմանադրական նորմերին՝ սահմանադրական կարգի սկզբունքներին կամ Սահմանադրության անփոփոխ դրույթներին:

Երկրորդ՝ սահմանադրական որևէ նորմ չի կարող ձևակերպվել կամ մեկնաբանվել կամ կիրառվել այնպես, որի հետևանքով կարգելափակվի կամ կասահմանափակվի սահմանադրական կարգի սկզբունքների կիրառման ոլորտը կամ կարծեգրվեն այդ սկզբունքները: Սահմանադրական այլ նորմերի սխալ ձևակերպման, մեկնաբանման կամ կիրառման եղանակով սահմանադրական կարգի սկզբունքների դեմ որևէ «ոտնձգություն» սահմանադրական այդ նորմերը դարձնում է հակասահմանադրական:

Աված եզրահանգումներն առավել առարկայական կարելի է քննարկել ստորև նշված կոնկրետ օրինակների վրա:

(բ) **Ուղղակի ընտրական իրավունքի՝ որպես սահմանադրական կարգի սկզբունքի և համայնքի ղեկավարի անուղղակի ընտրակարգի մասին սահ-**



մանադրական նորմի հակասությունը:

2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների (այսինքն՝ տեղական ինքնակառավարման և կոլեգիալ, և գործադիր մարմինների՝ հեղ.) ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ... ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, իսկ 108-րդ հոդվածում նախատեսված էր, որ օրենքով կարող է սահմանվել Երևանի քաղաքապետի (տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի՝ հեղ.) ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Հայ իրավաբանների շրջանակում երկար ժամանակ վեճերի տեղիք էր տվել այն հարցը, թե Երևանի քաղաքապետի անուղղակի ընտրության մասին սահմանադրական նորմն արդյոք հակասում է ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքին, այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածին (սահմանադրական կարգի հիմունքներին): Իրավաբանների մի մասը, այդ թվում՝ տողերի հեղինակը, այն դիտում էր որպես իրավական կոլիզիա, իսկ մյուս մասը՝ որպես իրավունքի սկզբունքից կատարված բացառություն, երրորդները՝ ընդհանուր և հատուկ նորմեր: Ընդ որում՝ հարցը ոչ թե զուտ տեսական էր, այլ խիստ գործնական, քանի որ կախված առկա հարցադրման որակումից՝ օրենսդրական լուծումները տարբեր էին լինելու: Եթե Սահմանադրության 4-րդ և 108-րդ հոդվածի հարաբերակցությունը որակվեր որպես իրավական կոլիզիա, ապա օրենսդիրը պետք է ղեկավարվեր սահմանադրական կարգի հիմունքներով, այսինքն՝ 4-րդ հոդվածով և Երևանի քաղաքապետի համար սահմաներ բացառապես ուղղակի ընտրակարգ, իսկ եթե Սահմանադրության 108-րդ հոդվածը դիտարկվեր որպես ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածից բացառություն կամ նրա համեմատ հատուկ նորմ, ապա նախապատվություն պետք էր տալ իրավական

բացառությանը կամ հատուկ նորմին, այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածին, և քաղաքապետի ընտրության համար օրենսդիրը կարող էր սահմանել նաև անուղղակի ընտրակարգ: Գործնականում ՀՀ օրենսդիր մարմինը ՀՀ Սահմանադրության 4-րդ և 108-րդ հոդվածների միջև հարաբերությունները չդիտարկեց իրավական կոլիզիայի հարությունում և օրենքով Երևանի քաղաքապետի համար սահմանեց անուղղակի ընտրակարգ: Կարծում ենք, որ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածը, զուտ իրավական տեխնիկայի տեսանկյունից, չէր կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի բացառություն, քանի որ 4-րդ հոդվածում ուղղակի ընտրական իրավունքից բացառության մասին վերապահում սահմանված չէր, իսկ Երևանի քաղաքապետի անուղղակի ընտրության հնարավորության մասին դրույթն ամրագրված էր ոչ թե 4-րդ հոդվածում, այլ 108-րդ հոդվածում:

2005 թ. խմբագրությամբ՝ ՀՀ Սահմանադրության 4-րդ և 108-րդ հոդվածների միջև հակասության առկայությունն անուղղակի ապացուցվում է նաև այն հանգամանքով, որ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ քննարկվող կարգավորումներում կատարվեցին փոփոխություններ և ենթադրյալ հակասությունը վերացվեց: Այսպես՝ 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածում նույնպես թվարկվում են ընտրական իրավունքի սկզբունքները, որոնց շարքում է նաև ուղղակի ընտրական իրավունքը, սակայն այն վերաբերում է միայն տեղական ինքնակառավարման կոլեգիալ մարմինների ընտրությանը, մինչդեռ 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 4-րդ հոդվածում ամրագրված ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքը վերաբերում էր նաև տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի ընտրությանը:

Բացի դրանից՝ 2015 թ. խմբագրությամբ՝ Սահմանադրության 181-րդ հոդ-



վածի 1-ին մասում ամրագրված է, որ ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի (տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի՝ հեղ) ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Նույն հոդվածում, ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության, ավելացվել է հետևյալ դրույթը. «Համայնքի ղեկավարի ուղղակի ընտրության դեպքում կիրառվում են Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքները»: Նման վերապահում կատարելով սահմանադիրը հստակեցրել է, որ ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ուղղակի ընտրության մասին սկզբունքը կիրառվում է համայնքի ղեկավարի միայն *ուղղակի* ընտրության դեպքում, իսկ անուղղակի ընտրության դեպքում՝ այդ սկզբունքները կիրառելի չեն: Այս կարգավորումը տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի համար ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքից կատարված բացառություն է, որը համապատասխանում է իրավական բացառությանը ներկայացվող որոշակիության պահանջին:

(գ) ՀՀ Նախագահի ինունիտետը v. սահմանադրական կարգի սկզբունքների

(1) Ընդհանուր դրույթներ: 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 56.1-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել իր լիազորությունների ավարտից հետո: Արդյոք նախագահի ինունիտետը գործում է սահմանադրական կարգի դեմ որևէ ոտնձգություն կատարելու, օրինակ՝ իշխանությունը յուրացնելու կամ սահմանադրական կարգը բռնի տապալելու մեղադրանքների դեպքում:

Ինչպես նշվեց, այս հարցը հայ հասարակությունում դարձել է հանրային բուռն քննարկման առարկա, որը պայմանավորված էր ՀՀ երկրորդ նախագահի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հանգամանքով:

(2) Եզրահանգումներ

(2.1.) Սահմանադրական կարգը բռնի տապալելը նախագահի կարգավիճակից բխող գործողություն: ՀՀ Սահմանադրության 56.1-րդ հոդվածում օգտագործվող՝ «իր կարգավիճակից բխող գործողություններ» ձևակերպումը ճիշտ չի արտահայտում ֆունկցիոնալ իմունիտետի իմաստը: Բանն այն է, որ անձի կարգավիճակը կազմում են նրա իրավունքները և պարտականությունները (լիազորությունները), երաշխիքները, իսկ հակաիրավական արարքի կատարումը չի կարող որակվել որպես անձի կարգավիճակից բխող գործողություն: Մյուս կողմից, հասկանալի է, որ քրեական հետապնդումից իմունիտետի կիրառումն իմաստ է ստանում ոչ թե իրավաչափ գործողություններ, այլ ենթադրյալ հակաիրավական արարքներ կատարելու դեպքում: ՀՀ Սահմանադրության այս հոդվածում առկա անհաջող ձևակերպման հետևանքով հայ հասարակության մեջ քննարկվում է, թե սահմանադրական կարգի բռնի տապալելուն ուղղված ենթադրյալ արարքներն արդյոք կարելի է դիտել որպես ՀՀ նախագահի կարգավիճակից բխող գործողություն:

Իրավական նորմի մեկնաբանման անհեթեթ արդյունքներից խուսափելու համար, քննարկվող հոդվածում օգտագործվող «կարգավիճակից բխող գործողություններ» ձևակերպման ներքո պետք է հասկանալ ՀՀ նախագահի գործառնություններին և լիազորություններին առնչվող հակաիրավական արարքները, այլ կերպ ասած՝ նշված հոդվածում խոսք է գնում նախագահի ֆունկցիոնալ իմունիտետի մասին:

(2.2.) Սահմանադրությունը չունի ինքնատշնչացման պոպրեկցիա: ՀՀ Սահ-

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2019 3 - 4 (237-238)

ՊԱՏԱԿԱՆ
Իշխանություն



մանադրության 2-րդ և 56.1-րդ հոդվածների հարաբերակցության մասին հնչել են բազմաթիվ մեկնաբանություններ: Մի դեպքում նույնիսկ նշվում էր, որ ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածն ընդհանուր նորմ է, իսկ ՀՀ Նախագահի ինուցիտետի մասին դրույթը հատուկ նորմ է, իսկ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության դեպքում նախապատվություն պետք է տալ հատուկ նորմին՝ ՀՀ նախագահի ինուցիտետին: Խնդիր չունենք անդրադառնալու հարցի միջոցառումների տեսանկյուններից, պարզապես կրկնենք՝ սահմանադրական որևէ նորմ, այդ թվում՝ նախագահի ինուցիտետի մասին դրույթը չի կարելի ձևակերպել, մեկնաբանել կամ կիրառել այնպես, որով կձևախեղվեն սահմանադրական կարգի հիմքերը կամ դրանք փաստացի կվերացվեն: Նախագահին կարելի է օժտել ֆունկցիոնալ ինուցիտետով մի շարք ենթադրյալ հանցագործությունների դեպքում, նույնիսկ, օրինակ՝ բարձրագույն կոչում տրամադրելու համար կաշառք վերցնելու, բայց ոչ սահմանադրական կարգի դեմ ուղղված որևէ արարք կատարելու դեպքում: Հակառակ մեկնաբանման պարագայում պետության բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար ինուցիտետը դառնում է այն «կանաչ ճանապարհը», որի միջոցով հնարավոր է, առանց որևէ պատասխանատվության ենթարկվելու հեռանկարի, բռնությամբ զավթել իշխանությունը, ապօրինի փոխել պետության կառավարման ձևը և ռեժիմը, հասարակությանը և մարդուն ստրկացնել, այլ կերպ ասած՝ ոչնչացնել սահմանադրական կարգը:

Այսպիսով՝ ՀՀ նախագահի ֆունկցիոնալ ինուցիտետը կարելի է օգտագործել որպես վահան և նրան ազատել քրեական

հետապնդումից նրա գործառույթներին վերաբերող հանցագործությունների դեպքում, բայց ոչ սահմանադրական կարգի սկզբունքների դեմ ոտնձգության դեպքում: Սահմանադրությունը չի կարող բովանդակել այնպիսի «ստոմային ռումբ», որն ունակ է ամեն յուրաքանչյուր ոչ միայն երկրի սահմանադրական կարգի հիմունքները, այլև ողջ Սահմանադրությունը և երկրում առկա սահմանադրականությունը: Սահմանադրությունը չունի և չի կարող ունենալ ինքնառոչնչացման պոտենցիալ:

Ի դեպ, միջազգային իրավունքում որևէ պաշտոնատար անձ, վկայակոչելով ինուցիտետի մասին նորմը, չի կարող ազատվել պատասխանատվությունից, օրինակ, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար: Այս կապակցությամբ լիովին ընդունելի է միջազգային իրավունքի մասնագետների այն մտտեցումը, ըստ որի՝ վերջին հիսուն տարիների ընթացքում աստիճանաբար հաստատվում է այն սկզբունքը, որ պետության գործող կամ նախկին գլուխների կամ կառավարության ղեկավարների դատական հետապնդումներից ինուցիտետը չի կարող կիրառվել միջազգային իրավունքով նախատեսված հանցագործությունների նկատմամբ: Միջազգային իրավունքը չի կարող բովանդակել հանցագործությունների արգելման մասին «jus cogens» բնույթի նորմեր և միաժամանակ սպահովել ինուցիտետով: Այսպիսով, խոշտանգումների արգելքի, ագրեսիայի, զինվորական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների իմպերատիվ բնույթը գերակայում է ինուցիտետի մասին նորմերին⁸:

Շարունակելի

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2019 3 - 4 (237-238)

ԴԱՏԱՎԱՆ
Իշխանություն

¹ Иоголевич Н.И., Конева Н.С., Правовые иммунитеты и конституционный принцип равенства перед законом и судом, Юридическая наука и правоохранительная практика, 2012, № 1, с. 37.

² Румянцев О.Р., Основы конституционного строя России (понятие, содержание, вопросы становления), М., Юрист, 1994, <https://rumiantsev.ru/a883/>.

³ Юсубов Э.С., Макаревич А.А., Конститу-

ционное право России: учеб. пособие. Т. 1. Общая часть. Томск: Изд. Дом Томского государственного университета, 2015, с. 73, Юсифова Л.А., Безуглов С.В. Иерархия норм в Конституции РФ, Сборник статей по материалам X Всероссийской конференции молодых ученых, посвященной 120-летию И.С. Косенко, Отв. за вып., А. Г. Кошаев, 2017, с. 856-857.

- 4 Հայաստանի Հանրապետության սահմանափակ իրավունք, Եր., 2002, էջ 65:
- 5 Петров А.А., Внутренняя согласованность действующей Конституции РФ и спорные вопросы преодоления коллизий в праве, www.academia.edu (17.12.2017).
- 6 Сравнительное конституционное право, 2-е изд. Отв. ред. В.Е. Чиркин, М., Междуна-

родные отношения, 2002, с. 67-68, Авакян С.А., Конституционное право России: учеб. пособие: в 2 т. 5-е изд., перераб. и доп. М., - Норма: ИНФРА-М, 2014, с. 191.

- 7 Gor Hovhannisyan, Vergleich zwischen der deutschen Verfassungsbeschwerde und dem armenischen Individualantrag. Berlin. 2015. S. 96.
- 8 Глотова С.В., Имунитеты должностных лиц государства и ответственность за международные преступления: международное и национальное право. Журнал российского права, № 2 (230), 2016, с. 134, Мнение лорда Миллета в деле UK House of Lords: Regina v. Bartle and the Commissioner of Police for the Metropolis and Others, Ex parte Pinochet (No. 3) [1999] 2 All England Reports. P. 179.



RESUME - РЕЗЮМЕ

NON-SYSTEM CONFLICTS AND INTRA-SYSTEM CONFLICTS OF PRINCIPLES OF LAW

Artur Ghambaryan

*Head of the Department of Theory and History of State and Law,
Russian-Armenian University, Doctor of Law, Professor*

The legal norms enshrined in positive law often contradict the principles of law (human rights). In the event of such a contradiction, preference is given to the principles of law (regardless of whether directly or indirectly the principle of law is enshrined in positive law). Moreover, in the event of a contradiction between the two legal norms defining a particular behavior, preference should be given to the rule that follows from the principle of law.

The legal conflicts should be distinguished from the exceptions arising from the principles of law. The Principles of law cannot fail to have exceptions, otherwise the objective need for a differentiated legal regulation of social relations will be blocked. The establishment of exceptions to the principles of law must comply with the requirements of *certainty* and *legality*.

Within the system of legal principles, competition may arise between them. This competition is not solved by using traditional conflict-of-laws rules (*lex superior, lex specialis, etc.*), but by the method of balance (*weighing and balancing*), which does not imply the insignificance of one of the principles in conflict. The solution of the conflict between the principles of law depends on the circumstances of the particular case, the moral and philosophical ideology that has taken shape at a given time and in a given society. In order to make the right choice between competing legal values, the Judge must have a large-scale and metaphysical thinking. It is not by chance that legal disputes regarding the choice between competing legal principles are usually resolved not in the Courts of the General jurisdiction, but in Constitutional and International Courts, where the atmosphere of the philosophy of law prevails.

Taking in account that the principles of law are often identified with human rights or with the guarantees of human rights, it can be said that the conflict of human rights is a particular manifestation of conflicts of principles of law. Some human rights conflicts can be resolved through compromise, and some conflicts (constitutional dilemmas) cannot be resolved purely on the basis of legal reason. The human rights dilemma can be described as a conflict of human rights in which the right of one person is exercised by destroying the right of another person. The human rights dilemmas are endowed with two features: they have an element of *tragedy* and *incommensurability*. A sign of the tragedy of the human rights dilemma has a *moral* and *legal* content. The incommensurability of the human rights dilemma means that in this case it is impossible to combine the human rights of a person in conflict.

Keywords: *conflicts of law; conflicts of principles of law; exceptions to the principles of law; human rights conflicts; human rights dilemma.*

ВНЕСИСТЕМНЫЕ КОЛЛИЗИИ И ВНУТРИСИСТЕМНЫЕ КОНФЛИКТЫ ПРИНЦИПОВ ПРАВА

Артур Гамбарян

*Завкафедрой теории и истории государства и права
Российско-армянского университета,
заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор*

Правовые нормы, закрепленные в позитивном праве, часто противоречат принципам права (правам человека). В случае такого противоречия предпочтение отдается принципам права (независимо от того, принцип права закреплен в позитивном праве прямо или косвенно). Более того, в случае про-

тиворечия между двумя правовыми нормами, определяющими конкретное поведение, предпочтение следует отдавать той норме, которая вытекает из принципа права.

Правовые коллизии следует отличать от исключений, вытекающих из принципов права. Принципы права не могут не иметь исключений, а иначе будет заблокирована объективная необходимость дифференцированного правового регулирования общественных отношений. Установление исключений из принципов права должно соответствовать требованиям определённости и правомерности.

Внутри системы правовых принципов между ними может возникнуть конкуренция. Эта конкуренция решается не путем использования традиционных коллизионных норм (*lex superior, lex specialis* и др.), а методом равновесия (*weighing and balancing*), что не предполагает ничтожность одного из принципов, находящихся в конфликте. Решение конфликта между принципами права зависит от обстоятельств конкретного дела, моральной и философской идеологии, сложившихся в данное время и в данном социуме. Для правильного выбора между конкурирующими правовыми ценностями судья должен обладать масштабным и метафизическим мышлением.

Не случайно, что правовые споры касательно выбора между конкурирующими правовыми принципами, как правило, разрешаются не в судах общей юрисдикции, а в конституционных и международных судах, где превалирует атмосфера философии права.

Имея в виду, что принципы права часто отождествляются с правами человека или с гарантиями прав человека, то можно сказать, что конфликт прав человека является частным проявлением конфликтов принципов права.

Некоторые конфликты прав человека возможно решить путем компромисса, а некоторые конфликты (конституционные дилеммы) не могут решаться чисто на основе правового разума. Дилемму прав человека можно охарактеризовать как такой конфликт прав человека, при котором право одного человека осуществляется путем уничтожения права другого человека. Дилеммы прав человека наделены двумя особенностями: они имеют элемент трагичности и несоизмеримы (*incommensurability*). Признак трагичности дилеммы прав человека имеет нравственно-правовое содержание. Несοοизмеримость дилеммы прав человека означает, что в этом случае невозможно сочетать права человека, находящегося в конфликте.

Ключевые слова: *Коллизии норм права; конфликты принципов права; исключения из принципов права; конфликты прав человека; дилемма прав человека.*

Բանալի բառեր - *իրավունքի նորմաների կոլիզիաները, օրենքի սկզբունքների կոնֆլիկտները, իրավունքի սկզբունքների բացառությունները, մարդու իրավունքի կոնֆլիկտները, մարդու իրավունքի երկրներում:*